«Մայր Հայաստան» դաշինքի նախընտրական ծրագիրը. Գյումրի

Սիրելի՛ գյումրեցիներ,

հարգելի՛ ընտրող,

«Մայր Հայաստան» դաշինքն այս ընտրություններում ներկայանում է Գյումրու ընթացիկ կառավարման և հեռանկարային զարգացման ծրագրերով: Ազատ տնտեսական գոտու ստեղծման և հարկային ռեժիմի թեթևացման առումով ազատ քաղաքի կարգավիճակ սահմանելու մեր առաջարկն ստորագրահավաքի ժամանակ արժանացել է ավելի քան 7.700 գյումրեցու հավանությանը: Մենք պարտավորվել ենք լսելի դարձնել գյումրեցիների ձայնը և դառնալ պահանջատեր վերը նշված ծրագրերը կյանքի կոչելու համար:

Գյումրիում կառավարման ղեկը ստանձնելու պարագայում մենք հետևողական ենք լինելու, որպեսզի մեր քաղաքը դառնա՝

- Հայաստանի բիզնես մայրաքաղաք՝ ազատ տնտեսական գոտու ներդրման և ազատ քաղաքի կարգավիճակ ստանալու միջոցով,
- Հայաստանի մշակութային մայրաքաղաք,
- Հայաստանի զբոսաշրջության մայրաքաղաք:

Վերը նշված նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ են ինչպես տեղական, այնպես էլ համապետական մակարդակի փոփոխություններ: «Մայր Հայաստանը» հանձնառու է ժողովրդի քվեն ստանալու դեպքում հետևողականորեն հասնել դրանց:

Քաղաքի ընթացիկ կառավարումը ներառելու է՝

1. **Բյուջետային միջոցների արդյունավետ ու թափանցիկ կառավարումը,** համատիրությունների աշխատանքների արմատական վերանայումը, համայնքային ծառայողների համար արժանապատիվ աշխատանքային պայմանների ապահովումը: Քաղաքի կառավարման մեր սկզբունքներն են լինելու՝

   -թափանցիկությունը,

   -որոշումների կայացմանը հանրային մասնակցության ապահովումը,

   -սոցիալական արդարությունը,

   -կարգապահությունը,

-հանրային շահի պաշտպանության առաջնահերթությունը,

-շարունակական բարեփոխումները:

2. **Տեղական տուրքերի ու վճարների ճկուն քաղաքականության** միջոցով փոքր ու միջին բիզնեսի խթանումը:
3. **Քաղաքի ասֆալտապատման իրականացումը.** առաջիկա հնգամյակում Գյումրիում ոչ բարեկարգ փողոց չպետք է լինի, քաղաքը պետք է մաքրվի փոշուց և աղբից:
4. **Քաղաքային տրանսպորտի բարեփոխումը,** որը ենթադրում է անցում անկանխիկ վճարման՝ տոմսային համակարգի, քարտային վճարման մեխանիզմների ներդրման միջոցով: GIS համակարգի ներդրումը կնպաստի տրանսպորտային ցանցի արդյունավետ կառավարմանը:

   Անկանխիկ վճարումները գործնականում կվերացնեն ստվերային շրջանառությունը, ինչը հնարավորություն կտա քաղաքապետարանին սոցիալապես խոցելի խմբերի համար (թոշակառուներ, հաշմանդամներ, պատերազմում զոհվածների ընտանիքներ, Արցախից բռնի տեղահանվածներ, ուսանողներ) սահմանել զեղչեր կամ ապահովել անվճար երթևեկելու հնարավորություն:

   Տրանսպորտի աշխատանքային ժամերը պետք է երկարաձգվեն մինչև ժամը 23:00: Տրանսպորտային պարկը պետք է թարմացվի՝ սեփական միջոցների և արտաքին դոնորների ներգրավմամբ:
5. **Փողոցային լուսավորության ապահովումը:** Գյումրուն լուսային փաթեթավորում տալը, այդ թվում՝ պատմամշակութային օբյկետների միջազգային ստանդարտներին համապատասխան լուսավորումը մեր առաջնահերթ խնդիրներից է:
6. **Կանաչապատ նոր տարածքների ստեղծումը** և դրանց շարունակական խնամքի ապահովումը: Թափոնների առաջադեմ վերամշակման և տեսակավորման ծրագրերի իրականացումը:
7. **Միջազգային լավագույն փորձի ներդրմամբ թափառող շների հիմնախնդրի լուծումը** շատ կարճ ժամանակահատվածում:

8. **Կրթական ոլորտում ներգրավված աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը՝** տեղական բյուջեի անարդյունավետ ծախսերի կրճատման և լրացուցիչ միջոցների ներգրավման հաշվին:
9. **Երիտասարդության զարգացման հիմնադրամի ստեղծումը՝** հիմք ընդունելով «Մենք» նախաձեռնության նախընթաց փորձն ու երիտասարդների համար մշակելով կրթական ու բիզնես ոլորտներին վերաբերող հատուկ ծրագրեր:

10. **Զբոսաշրջության զարգացման կենտրոնացված քաղաքականության իրականացումը,** որի համար զարգացման լուրջ խթան կարող է դառնալ ազատ տնտեսական գոտու և ազատ քաղաքի ռեժիմների ներդրումը:

Քաղաքապետարանը գովազդային լրջագույն քաղաքականություն պետք է իրականացնի՝ Գյումրու զբոսաշրջային գրավչությունը բարձրացնելու նպատակով: Մասնավորապես՝ մշակութային, խոհարարական և ստեղծագործական փառատոնների կազմակերպում, մարքեթինգային արշավների իրականացում:

11. **Գյումրին մշակութային մայրաքաղաք դարձնելու** գործնական քայլերի իրականացումը, որի համար խիստ անհրաժեշտ է ազատ տնտեսական գոտու ստեղծումը, ինչը հսկայական ֆինանսական միջոցների մուտք կապահովի քաղաքային բյուջե և հնարավորություն կտա կոնկրետ ծրագրեր իրականացնել:

12. **«Խելացի քաղաքի» կառուցում,** որը նախատեսում է՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների ներգրավում,

-քաղաքիի կառավարման թվայնացում,

-«E- governance» համակարգերի ներդրում,

-տեղական «IT» ընկերությունների և ստարթափերի համար բարենպաստ աշխատանքային պայմանների ստեղծում,

-համայնքային տարածքների խելացի կառավարում,

- GIS Աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրում:

. . .

Գալիք հինգ տարիների ընթացքում պլանավորում ենք հետևյալ աշխատանքները

- վերականգնել Գյումրու փլուզման եզրին գտնվող պատմամշակութային հուշարձանները,
- քաղաքապետարանը պետք է աջակցի մասնավոր սեփականություն հանդիսացող հուշարձան-շենքերի ֆասադների ու կտուրների վերականգմանը,
- ավելացնել բարվոք վիճակում գտնվող բազմաբնակարանային շենքերի թիվը,
- իրականացնել բակերի բարեկարգման աշխատանքներ, այդ թվում՝ ստեղծել բակային ֆուտբոլի խաղադաշտեր,
- կահավորել փողոցները ճանապարհային նշանների ավելացման միջոցով,
- վերականգնել նախկին Երկաթուղայինների մշակույթի պալատի շենքը,
- քաղաքի սպորտային ավանդույթների պահպանման և սերունդներին փոխանցման համար ստեղծել Սպորտի թանգարան,
- մաքրել «Շիրակ» գերեզմանատան տարածքը և բարձրացնել հուղարկավորությունների ժամանակ ծառայությունների մատուցման որակը,
- վերանորոգել Սավոյան փողոցի շատրվանները և ստեղծել նոր պուրակ,
- ստեղծել ժամանակակից նոր փոքր շուկաներ,
- ստեղծել տեղեկատվական կենտրոններ օդանավակայանում, երկաթգծի կայարանում և Բավրա անցման կետում՝ Գյումրու մասին տեղեկությունները զբոսաշրջիկներին հասանելի դարձնելու նպատակով:

Հարգելի՛ ընտրող, Գյումրին փոփոխությունների շեմին է:

Միացի՛ր, որ փոխենք